10.56653/18290361-2025.16-57

Լիլիյա Ավանեսյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
lilia.a65@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ 17-ՐԴ Դ. ԳՈՐԳԵՐԸ*

Հիմնաբառեր. գորգ, հորինվածք, զարդաձև, կտոր, արտադրություն, արհեստանոց, որդան կարմիր

Ներածություն

Հայաստանի պատմության թանգարանի գորգերի հավաքածուում առանձնահատուկ տեղ են գրավում Վասպուրականի 17-րդ դ. գորգերից երեքը (Avanesyan 2023, 78; Գրիգորյան, Թաթիկյան 2012, 122–123):

Առաջինը՝ ՀՊԹ № 8968 գորգը (337×166 սմ, բուրդ, բամբակ, խտ. 1դմ² 1088) ձեռք է բերվել ամերիկահայ բարերար Հակոբ Ասատուրյանի կողմից և 1972 թվականին նվիրաբերվել Հայաստանի պատմության թանգարանին (նկ. 1):

Երկրորդ գորգը՝ ՀՊԹ № 10101-2 (460×205սմ, բուրդ, բամբակ, 1դմ² 783) ձեռք է բերվել ֆրանսահայ բարերար Ալպեր Աշճյանի կողմից, որն ամբողջացնելուց և վերականգնելուց հետո 1979 թվականին գորգը նվիրել է Հայաստանի պատմության թանգարանին: Գորգի վրա՝ վերևի աջ հատվածում, կա նվիրատուի՝ Ալպեր Աշճյանի անունը: Ինչ ուղիներով և ո՞ր իրադարձությունների հետևանքով են այս երկու գորգերը հայտնվել օտար երկրներում՝ չենք կարող ասել (նկ. 2):

Երրորդը՝ ՀՊԹ № 9282 գորգը (286 × 100 սմ, բուրդ, բամբակ, 1դմ² 598) գնվել է Օվսաննա Սողոմոնի Գեղամյանից Գառնիում, 1973 թվականին՝ գիտարշավի ժամանակ: Տնայնագործական եղանակով պատրաստված այս գորգը տոհմական ժառանգություն է և Գառնի է բերվել Մակուից 1828–1829 թվականներին՝ Իրանից դեպի Հայաստան հայերի մեծ ներգաղթի ժամանակ (նկ. 3):

Ցավոք, մենք չենք կարող ստույգ որոշել, թե Վասպուրականի ո՞ր գավառում և ո՞ր գորգագործական կենտրոնում են գործվել գորգերից երկուսը՝ ՀՊԹ № 8968, ՀՊԹ № 10101-2: Դրանց նման օրինակներ են գտնվում աշխարհի տարբեր հավաքածուներում: Այս գորգերն օտար գորգավաճառները, արվեստագետներն ու կոլեկցիոներները երբեմն դասում են ղարաբաղյան (արցախյան), երբեմն էլ՝ կովկասյան (այսրկովկասյան) գորգերի շարքին: Թյուրիմացությունը գալիս է հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի և հայ մշակույթի մասին գիտելիքների պակասից կամ բացակայությունից: Տվյալ աշխատանքի նպատակներից է հստա-

* Ստացվել է 31.07.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 28.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ:

կորեն ներկայացնել հայկական գորգագործական կենտրոններից մեկի՝ Վասպուրականի 17-րդ դ. գորգերից մի քանիսը:

ՀՊԹ Վասպուրականի գորգերի հորինվածքային կառուցվածքն ու զարդապատկերների իմաստաբանությունը

ՀՊԹ № 8968 գորգի մակերեսը խիստ վնասվածքների պատճառով մասնակիորեն վերականգնված է՝ առանձին հատվածներն ուղղակի ամրացված կամ համակցված են: Այդ պատճառով էլ գորգանկարն ամբողջական չէ և աղավաղված է: Այս գորգի այլ տարբերակներ է հրատարակել գերմանացի արվեստաբան Ֆոլքմար Գանցհորնը Արևելյան գորգերի մասին աշխատություններում (Gantzhorn 1998, 349, 351, 479):

Ակնհայտ է, որ գորգանկարի յուրաքանչյուր դրվագում կանոնավոր դասավորությամբ զարդապատկերներ են եղել: Տվյալ նմուշի աջ կողմում կա ձևարձակ մեդալիոնի մի հատված, որը նման է արցախյան «Ձրաբերդ» գորգերի կենտրոնական զարդապատկերին: Հորինվածքի խաչերը, վարդակները, ճառագայթաձև դասավորված նախշերը, դրանց ներսում տեղադրված բամբակենու պատկերներն արևի խորհրդանշաններից են, կապված՝ արևի պաշտամունքի հետ: Արևի պաշտամունքի հետ կապ ունեն նաև մեդալիոնների ներսում տեղադրված ծառի, արմավենյակի, կենդանակերպ պատկերները[1]: Մեդալիոնների աղեղնաձև երիզները նույնպես զարդարված են բամբակենու պատկերներով և օձանախշերով: Պետք է նշել, որ աղեղնաձև կորություններով և այլ ուրվագծերով զարդամոտիվներն ունեն դեկորատիվ բնույթ, որը բնորոշ է հայկական միջնադարյան դեկորատիվ արվեստին: Միջնադարից դեպի նոր՝ 19–20-րդ դդ. ժամանակահատվածը «անցումային» տիպի այս գորգն ունի ոճավորված արծվի և ոճավորված կարիճի համակցված զարդապատկերներ: Գորգի զարդամոտիվների, դրանց ձևերի, գույների (հատկապես վառ կարմիրի, մուգ կապույտի, դեղինի, մանուշակագույնի) համադրումը միջնադարյան մանրանկարների տպավորություն են թողնում: Արվեստաբան Հրավարդ Հակոբյանը գրում է, որ Վասպուրականի ձեռագիր մատյանները զարդանկարչության հիանալի նմուշներ են, որտեղ ձևերի, մոտիվների, հյութեղ գույների այնպիսի մի ընդգրկում կա, որ մտաբերում ես գորգերի ճոխությունն ու շքեղությունը (Հակոբյան 1982, 63, 99):

Գորգի հորինվածքը, ինչպես նշեցինք, համեմատական զուգահեռներ ունի հայկական «Ձրաբերդ» և «Գուհար» գորգերի հորինվածքների հետ, որոնց առանձին դրվագներ հետագայում հայտնվում են 19–20-րդ դդ. Արցախ-Սյունիքի հայտնի գորգերի վրա (Թաթիկյան 2004, նկ. 6–23, նկ. 167–185):

• • •

Վասպուրականի ՀՊԹ № 10101-2 գորգի հորինվածքը բաղկացած է իրար հաջորդող երկու վահանաձև մեդալիոններից: Յուրաքանչյուր մեդալիոնի կենտրոնում խաչաձև հիմքով ոճավորված ծառի պատկեր կա: Նրա կողմերում տեղա-

[1] Թևավոր արևի, արմավենյակների, ծառի, ոճավորված կարիճների պատկերներով գորգերը երբեմն դասում են վիշապագորգերի խմբին:

դրված են վերացարկված կենդանակերպ նախշեր, որոնք որոշ արվեստաբաններ համարում են վիշապի ոճավորված պատկեր: Մեր կարծիքով այս պատկերի վրա, հատկապես, առանձնանում է կորագծված խայթը: Նշենք, որ առասպելական վիշապի գլխավոր հատկանիշը երախն է, արծվինը՝ ճառագայթաձև տարածվող թևերը, իսկ կարիճի հատկանիշը խայթն է:

Հին Արևելքի արվեստում կարիճի նման պատկերը տեղադրվում էր ծառի և արևի խորհրդանշանների կողքին և կապվում էր արևի պաշտամունքի հետ: Թեև քրիստոնեական ընկալմամբ կարիճը, վիշապի նման, աղերսվում էր ստորերկրայքում գտնվող չար էակների և չար ուժերի հետ: Սակայն Վասպուրականի և Արցախի 17-րդ դ. գորգերի վրա մենք տեսնում ենք հնագույն հավատալիքների և պաշտամունքների դրսևորման տարբեր ձևեր և արձագանքներ: Կարիճի նմանատիպ պատկերներ կան Կարմիր բլուրի Թեյշեբաինի ամրոցից գտնված կնիքների վրա (ՀՊԹ №2010-153): Իսկ ամրոցի № 28 պահոցից հայտնաբերվել է նաև կարիճ աստվածության կավե արձանիկ (ՀՊԹ №2010-45) (նկ. 4), որի պատկերները գտնվել են Ուրի թագավորական դամբարանում (Пиотровский 1952, 24): Թևավոր արևի, ծառի և կարիճի պատկերներ կան նաև ասորական հնագույն կնիքների վրա (Пиотровский 1950, 77–79): Մեծ բանասեր, ազգագրագետ Գարեգին եպս. Սրվանձտյանցը «Գրոց ու բրոց» աշխատության մեջ խոսում է Վանում պահպանված հին սովորույթի մասին, երբ կարիճի ձևով մանր ուլունքները շարում էին ու կարում երեխայի գդակի (գլխարկի) կամ հագուստի վրա (Սրվանձտյանց 1978, 69):

Կարիճն, ընդհանրապես, պատկերվում էր ծառի կողքին: Կարիճի պատկերով գորգերը զարդարված են բուսական մոտիվներով, որտեղ ծառի պատկերը առանձնահատուկ նշանակություն ունի: Վանում (և ամբողջ Հայաստանում) արևի ու ծառերի պաշտամունքի մասին Գարեգին եպս. Սրվանձտյանցը գրում է՝ Վանում կան «ծառեր և թուփեր, որոնք սուրբ համարված են» (Սրվանձտյանց 1978, 47): Տեղին է հիշատակել, որ Վանը արևային Միհր-Միհերի պաշտամունքային հայտնի կենտրոններից է: Իսկ արևմտյան՝ հռոմեական տիրույթի միհրականության հուշարձաններում կարիճը արևի՝ Միհրի օգնականն է և պատկերվում է նրա կողքին (Ohandjanian, Awanessian 2007, 32):

Ամփոփելով ՀՊԹ № 10101-2 գորգի զարդապատկերների նկարագրությունը, նշենք, որ հարատևություն խորհրդանշող ծաղկազարդերն ու բուսանախշերը, դրանց խիստ կանոնավոր, սիմետրիկ դասավորությունը հորինվածքի ներսում, որոշ զարդապատկերների դոգմատիկ-խորհրդանշական բնույթը, վկայում են այն մասին, որ այս և նախորդ գորգի ձևավորումը ստեղծվել է հատուկ վարպետ-նկարիչների կողմից: Իսկ թելերը ներկված են հատուկ տեխնոլոգիաների կիրառմամբ և ներկերի ամրության շնորհիվ լավ են պահպանվել: Սա վկայում է վարպետ-ներկարարների գերազանց աշխատանքի մասին: Ավելացնենք, որ գունային երանգների համադրումն, ինչպես նշվեց, ամբողջովին համապատասխանում է հայկական մանրանկարչական արվեստի գունաշարին: Կրկին մեջբերելով արվեստաբան Հրավարդ Հակոբյանին՝ նշենք, որ միջնադարյան հայկական դեկորատիվ-կիրառական արվեստների նմուշներին, այդ թվում գորգերին և նրանց զարդանախշային ձևերին, վերացականության և խորհրդանշային տարրերին հոգեհարազատ են հայկական մանրանկարները (Հակոբյան 1982, 40–41):

•••

Վասպուրականի Արտազ գավառում է գործվել ՀՊԹ № 9282 գորգը: Գորգի շրջագոտու վերին հատվածում կա արաբական հիջրի նիշերով քրիստոնեական ժամանակագրությամբ թվական՝ «1689» և դժվար ընթեռնելի հիշատակագրություն՝ **«ՍՀԿԻՆ Է»**, այսինքն՝ **«ՍԱՀԱԿԻՆՆ Է»** [2]:

Կարմիր գորգադաշտի երկայնքով տեղադրված են բազմանկյուն, խաչերով և խաչաձև նախշերով փոքր մեդալիոններ: Գորգադաշտի վերևի և ներքևի առանձնացված հատվածներում կան կարճ, լայն, հավասար թևերով, միանման խաչեր: Արևի գաղափարագրերից հավասարաթև խաչերն ու արևի հավերժական պտույտը խորհրդանշող կեռխաչերը բազմիցս հանդիպում են Վասպուրականի 18–19-րդ դդ. ասեղնագործված ծածկոցների և սրբիչների վրա[3] (Աշուղաթոյեան 2019, 29–31):

Վառ կարմիր, բաց դեղին, կապույտ գույների համադրությունը, որտեղ գերակշռողը կարմիրն է, բնութագրական են Վասպուրականի գորգերի համար: Կարմիր, դեղին, կապույտ, կապտականաչ գույների համադրություն ենք տեսնում Վասպուրականի 14–15-րդ դդ. մանրանկարներում: Ուսումնասիրվող գորգի հորինվածքի, զարդապատկերների և գույների, հատկապես որդանով ներկված կարմիրի ուսումնասիրությունը, հաստատում են նրա կապը Վասպուրականի ավանդական գորգագործության և գորգարվեստի հետ: Գորգադաշտը երիզող և արտաքին նեղ գոտիները զարդարված են Վասպուրականի կիրառական արվեստում հաճախ հանդիպող օձանախշերով: Լայն, դեղին շրջագոտին զարդարված է պտղաբերության գաղափարն արտահայտող վարսանդներով, ծիլերով, երկնային ջրերը՝ անձրևը խորհրդանշող նախշերով: Դրանցից է եռանկյուն նախշը, որի գագաթից դեպի երկու կողմերը «ծիլեր են արձակվում», իսկ ստորին հատվածից դեպի ներքև ձգվում են ծաղկաձև նախշեր: Նմանատիպ կառուցվածք ունեն Վասպուրականի՝ Գավաշի, Վանի և այլ գավառների 18–19-րդ դդ. կանանց քունքազարդերը (Իսրայելյան 2021, 130–134): Իմաստաբանական առումով դրանք կապված են, հատկապես, ջրի տարերքի հետ: Ձուրն օժտված է արգասավորման և բուժիչ հատկություններով: Ուրարտագետ Սիմոն Հմայակյանը նշում է, որ ջրի պաշտամունքի հետ էր կապված Վանի թագավորության Իրմուշինի աստվածությունը, որի պաշտամունքային կենտրոնը գտնվում էր Վանա լճի արևելյան ափերի մոտ (Հմայակյան 1990, 56): Հայագետ Գրիգոր Ղափանցյանի և ուրարտագետ Բորիս Պիոտրովսկու կարծիքով՝ ձկան հատկանիշներով Իրմուշինին եղել է Վանի թագավորության (Ուրարտուի) բժշկության աստվածությունը (Հմայակյան 1990, 56): Անձրևի կամ երկնային ջրերի գաղափարանշանները Վասպուրականի գոր-

---

2 Գորգի վրայի հիշատակագրությունը վերծանել են Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի «Մատենադարան» գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցներ՝ Անի Ավետիսյանը, Քրիստինե Կոստիկյանը, Մովսես Խեչոն և Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող Արմինե Ջոհրաբյանը:

3 Հայաստանի պատմության թանգարանի Վան-Վասպուրականի 17–19-րդ դդ. ծածկոցների և սրբիչների հավաքածուից են ՀՊԹ № 185, № 189, № 190, № 191, № 200, № 253, № 283, № 3191, № 3506, № 10569-2 նմուշները: Ծածկոցներից մի քանիսը ուղղակի հիշեցնում են 17–18-րդ դդ. Վասպուրականի, Արցախ-Սյունիքի գորգերի հորինվածքները (նկ. 5):

գերի և կանանց զարդերի վրա ունեն պահպանական նշանակություն և նույնպես օժտված են բուժիչ հատկություններով, ինչպես Վանի թագավորությունում ջրային տարերքի հետ առնչվող բժշկության Իրմուշինի աստվածությունը: Գորգի նեղ երիզներում նույնպես «պտղաբերություն» գաղափարն արտահայտող խորհրդանշաններ են տեղադրված:

Ինչպես նշում է ազգագրագետ Աստղիկ Իսրայելյանը՝ «Խորհրդանշական իմաստ էին կրում ոչ միայն զարդերի ձևերն ու նախշերը, այլև այն նյութերը, որոնցից նրանք պատրաստվում էին: Դրանց վերագրվում էր բարիք բերելու և չարից պաշտպանելու հատկություն՝ ընդհուպ մինչև թշնամիների չարագործություններից ու կայծակից պաշտպանելը, հիվանդությունները կանխարգելելը, բուժելը և այլն» (Իսրայելյան 2021, 89): Նույնը վերաբերում է թելերին, որոնցով գործվել են գորգերը:

Այսպիսով, ՀՊԹ № 9282 գորգի հորինվածքը, գեղարվեստական առանձին տարրերը, գույները և հիշատակագրությունը («Սահակ» անձնանունը և Քրիստոսի «1689» թվականը) թույլ են տալիս վստահաբար ասելու, որ այն կարելի է դասել մեզ հասած եզակի գորգերի շարքին:

Համառոտ տեղեկություններ Վասպուրականի գորգագործության մասին

Խավով գորգերի ծագման ստույգ ժամանակը մեզ հայտնի չէ: Փաստ է, որ թանկարժեք անկված և խավով ու հանգույցներով գորգեր են պատրաստել դեռևս Վանի թագավորությունում (Ուրարտու) Ք.ա. 7–6-րդ դարերում: Այդ ժամանակաշրջանի սեպագիր արձանագրությունները (Арутюнян 2001, 46–48, 398), բարձրաքանդակները (Հմայակյան 1990, 56, աղ. 18, նկ. 2), բրոնզե գոտիների պատկերները (Գրեկյան 2008, 292–308; Avanesyan 2023, 171–172), պեղումներից հայտնաբերված թելերը, աշխատանքային գործիքներն ու գործվածքների հատվածները վկայում են Վանի թագավորությունում զարգացած մանածագործության և գորգագործության մասին: Միայն կենտրոնացված, հզոր պետության մեջ կարող էին արագ զարգանալ երկրագործական, անասնապահական տնտեսության այն ճյուղերը, որոնք սերտորեն կապված էին մետաղամշակության, ոստայնանկության (ջուլհակության), ներկարարության, խեցեգործության, քարակոփ և փայտափորագիր արհեստների հետ: Բրդի հումքի և ներկանյութերի առատությունը, աշխատանքային գործիքների ստեղծումն ու դրանց կատարելագործումը նպաստում էին գործվածքների՝ այդ թվում գորգերի մեծաքանակ արտադրությանը: Այսպես, ուրարտագետ Նիկոլայ Հարությունյանի ներկայացրած քարտեզի վրա նշված են Վանա լճից մինչև Ուրմիա լիճ ընկած անասնապահական այն շրջանները, որտեղ բուծում էին ոչխար, այծ և ուղտ (Арутюнян 1964, 194): Այս կենդանիների բրդից կամ աղվամազից էին պատրաստում հագուստներ, ծածկոցներ, տարբեր այլևայլ գործվածքներ: Դրա վկայությունն են Թեյշեբաինի ամրոցից (Երևան) հայտնաբերված հանգույցներով, խավով Ք. ա. 7–6-րդ դդ. բրդյա կտորների հատվածները (Верховская 1955, 67–71; Арутюнян 1964, 192): Իսկ գորգագետ Պետեր Թրիմբախեի կարծիքով, Պազիրիկի դամբարանադաշտում գտնված Ք.ա. 5-րդ դարի գոր-

գը[4], ստեղծվել է Վանի թագավորության տարածքում և կապված է հայկական ավանդական գորգարվեստի հետ (Trimbacher 1988, 1–10): Այդ կապակցությամբ արվեստաբան Վահրամ Թաթիկյանը գրում է, որ «Պազիրիկ» գորգի «զարդագոտիների մոտիվները պատվիրատու սկյութների կրոնա-ծիսական պատկերացումների արտացոլումն են, իսկ գորգի դաշտի ճառագայթող զարդանախշերը դառնում են գորգարվեստի մնայուն զարդամոտիվներ՝ փոխանցվելով դարերի միջով ու հասնելով շատ դարեր հետո գործված հայկական գորգերին» (Թաթիկյան 2004, 6):

Վանի թագավորության տարածքում՝ կազմավորված Մեծ Հայքի Վասպուրական նահանգում, ինչպես անցյալում, այնպես էլ միջնադարում և ավելի ուշ ընկած ժամանակաշրջանում, շարունակում էին զբաղվել գորգագործությամբ և կտորների արտադրությամբ: Սրա վկայություններից են Աղթամարի 10-րդ դ. Սբ. Խաչ եկեղեցու բարձրաքանդակները, որտեղ մարդիկ պատկերված են շքեղ հագուստներով: Հետաքրքիր է Գագիկ 1-ին Արծրունու բարձին կամ գորգին բազմած դիրքով ներկայացված պատկերը (Պատրիկ 1967, 48, տախ 19): Անդրադառնալով հայկական 11–17-րդ դդ. դաջազարդ կտորներին, նշենք, որ դրանց մեջ կան Վասպուրականի կտորների նմուշներ, որոնք գորգերի զարդամոտիվներ և գույներ ունեն (Քյուրքչյան 2016, 144, 152, 184, նկ. 13, նկ. 14, 186, նկ. 4):

Վերլուծելով գորգագործության զարգացման փուլերը՝ նշենք, որ 17-րդ դարը հայկական գորգագործության վերելքի փուլերից էր, որը պայմանավորված էր տվյալ ժամանակահատվածում միջազգային առևտրի աշխուժացմամբ. 17-րդ դարում Եվրոպայի և Ասիայի միջև առևտրա-տնտեսական և մշակութային փոխանակման ոլորտում աճեց հայերի միջնորդավորված դերը (Мартиросян 1998, 117): «Հայ առևտրական ընկերության» ստեղծումը 17-րդ դարի սկզբին և նրա ակտիվ գործունեությունը, ինչպես նաև մետաքսի միջազգային առևտրի աննախադեպ վերելքը, խթանեցին հայկական ավանդական արհեստների՝ գորգագործության, մանածագործության, պղնձագործության, ոսկերչության զարգացման գործընթացը: Չնայած հայերի քաղաքական ծանր իրավիճակին ու մասնատվածությանը[5] Հայաստանում, մասնավորապես Վասպուրականում, այդ ժամանակ զարգացավ արժեքավոր գորգերի ու կտորների արտադրությունը: Բրդից ու մետաքսից պատրաստված խավով գորգերն ու թանկարժեք կտորները մեծ պահանջարկ ունեին եվրոպական շուկաներում: 17-րդ դարում Լեհաստանի քաղաքներում, օրինակ՝

---

4 Գորգը գտնվել է 1949 թ. Ռուսաստանի Ալթայի մարզի Պազիրիկի դամբարանադաշտի № 5 դամբարանում Սերգեյ Ռուդենկոյի ղեկավարած հնագիտական պեղումների ժամանակ: Գորգը թվագրվում է Ք.ա. 5-րդ դ.: Պետական Էրմիտաժի գիտաշխատող Լյուդմիլա Բարկովայի կարծիքով, գորգը գործվել է ուղղահայաց տորքի վրա (Баркова 2012, 28): Բազմաթիվ փաստեր վկայում են, որ դեռևս Ք.ա. 8–7-րդ դդ. ուղղահայաց տորքեր օգտագործել են Վանի թագավորության (Ուրարտուի) մանածագործական արհեստանոցներում: Գորգը գործված է բրդյա թելերով, չափերն են՝ 200×185սմ, խտ. 1դմ2 3600, գործված է հայկական գործվածքին բնորոշ զույգ հանգույցով: Գորգի վրա գերակշռող կարմիրը հայկական որդան կարմիրն է:

5 Թուրք-իրանական երկարատև պատերազմներից հետո Վասպուրականը 1639 թվականին Կասրե Շիրինի պայմանագրով բաժանվում է երկու մասի՝ մեծագույն մասն անցնում է Թուրքիային, իսկ Վասպուրականի Նախիջևանի, Մակուի, Խոյի, Ղարադաղի տարածքներն անցնում են Իրանին (Հակոբյան և այլք 1998, 767):

Լվովում, գորգերն ու մի շարք այլ արտադրանքներ անվանվում էին «հայկական ապրանք» (Քիւրտեան 1947, 86)։ «Հայ առևտրական ընկերության» գործունեության շրջանակներում նպաստավոր պայմաններ են ձևավորվում մանուֆակտուրային արտադրության համար։ Հայ գորգագործ վարպետները միշտ ապահովված են եղել իրենց իսկ կողմից ստեղծված տեխնիկական անհրաժեշտ միջոցներով՝ բրդի մշակման համար սանդերքներով, թելի մանվածքի համար՝ իլիկներով և ճախարակներով, ներկարարության համար անհրաժեշտ միջոցներով, գործելու համար՝ ուղղահայաց հաստոցներով, դանակներով, մկրատներով, գործվածքի թելերը ամրացնող կոփիչ-կտուտիչներով։ Դրանցով էր պայմանավորված բարձրորակ և արժեքավոր գորգերի արտադրությունը մանուֆակտուրաներում և տնայնագործական պայմաններում։ Եվ դրա շնորհիվ գորգագործական Արցախում, հավելենք նաև՝ Վասպուրականում, արտադրվող գորգերը եվրոպական շուկաներում հայտնի էին **«ARMENIAN CARPETS»** անվանումով (Исаев 1932, 25–26)։

Հայտնի է նաև, որ արհեստների զարգացումը կամ անկումը պայմանավորված է լինում քաղաքական, հասարակական, տնտեսական գործընթացներով։ Այսպես, 14–15-րդ դդ. Հայաստանում տիրող տնտեսական վիճակի մասին արվեստաբան Հրավարդ Հակոբյանը գրում է, որ միջազգային տարանցիկ մայրուղու Վասպուրականով անցնելը, բնականաբար, պետք է խթաներ տեղական առևտրի և ապրանքափոխանակման գործին։ Հեղինակը մեջբերում է վենետիկցի վաճառականներից մեկի հուշագրությունը Վանա լճի շրջակայքի մասին, որտեղ ասված է. «Երկիրը բարեբեր է՝ լի գյուղերով, և գյուղացիները մեծագույն թվով հայեր են։ Այս ծովի շուրջը կան յոթ փառավոր ամրոցներ… Բոլոր այս ամրոցներում առևտուր եմ արել, որովհետև Թավրիզից գնալիս անցա մեկ կողմից և վերադարձին՝ մյուս կողմից» (Հակոբյան 1982, 12–13)։ Նշենք, որ Վասպուրականում 13-րդ դարի 2-րդ կեսից մինչև 17-րդ դարը գործել է հայկական մանրանկարչության ամենախոշոր դպրոցներից մեկը, որից մեզ է հասել շուրջ 1500 ձեռագիր մատյան (Korkhmazian et al 1984, 36–37, pl. 37–59)։ Վերլուծելով Վասպուրականի մանրանկարները՝ Հակոբյանը անդրադառնում է ձեռագրերի գեղարվեստական նկարագրին, մանրանկարների ոճական առանձնահատկություններին, ժողովրդական կենցաղապատկերներին, հնագույն բնապաշտության արձագանքներին։ Նա գրում է՝ «…ռիթմիկ գծերի ու միմյանցից զատվող չեզոք, բայց հնչեղ գույների համադրությունը» բացահայտում է Վասպուրականի դեկորատիվ-կիրառական արվեստի ու մանրանկարչության միջև գոյություն ունեցող սերտ կապերը։ Ինչպես բազմիցս նշվեց, հեղինակը համեմատական զուգահեռներ է անցկացնում Վասպուրականի մանրանկարչության և գորգարվեստի միջև (Հակոբյան 1982, 99)։ Խոսելով Վասպուրականի Աղբակ գավառի մանրանկարչական դպրոցի մասին՝ Հրավարդ Հակոբյանը անդրադառնում է ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում տեղ գտած նյութերին։ Դրանց մեջ ուշագրավ են Աղբակին վերաբերող տեղեկությունները։ Վանի նահանգի Աղբակի գավառը գտնվում էր Վանից հարավ-արևելք ընկած տարածքում, սահմանակից էր Իրանին և դեռևս հնուց Սալմաստի միջոցով առևտրական կապերի մեջ է եղել մշակութային հին ավանդույթներով հարուստ Իրանի հետ (Հակոբյան և այլք 1986, 161; Հակոբյան 1991, 410; Հակոբյան

1982, 18): Աղբակի բնակչության զգալի մասը հայեր էին, որոնք խստորեն պահպանում էին իրենց ազգային սովորույթներն ու «մշակույթի հնամենի ավանդները»: «Աղբակի կանայք, — գրում է Հրավարդ Հակոբյանը, — հոչակված էին գունագեղ գորգեր գործելու իրենց ճարտարությամբ» (Հակոբյան 1982, 18): Դրա մասին են վկայում Վասպուրականի մանրանկարների ավետարանչական տեսարաններում բազմիցս հանդիպող հագուստների, գորգերի, ծածկոցների, վարագույրների և այլ գործվածքների պատկերները: Սիմեոն Արճիշեցու (13–14-րդ դդ.), Կիրակոս Աղբակեցու (13-րդ դ. վերջ–14-րդ դդ.) (նկ. 6ա), Հովսիան Բերկրեցու (14-րդ դ. առաջին կես), Ռստակես Խիզանեցու (14-րդ դ. երկրորդ կես–15-րդ դ. սկիզբ), Թումա Ոստանեցու (15-րդ դ. առաջին կես), Հովհաննես Խիզանեցու (14-րդ դ. վերջին քառորդ–15-րդ դ. սկիզբ), Մկրտիչ Խիզանեցու (15-րդ դ.) և այլոց նկարազարդ Ավետարանների տարբեր տեսարաններում Տիրամայրը և ավետարանիչները նստած են կարպետահյուս կամ գորգահյուս գործվածքների վրա: Ուշագրավ են մանրանկարիչներ Հովսիանի (1316 թ. Ավետարան, ՄՄ 4818), Թումայի (1414 թ. Ավետարան ՄՄ 5523), Հովհաննես Խիզանեցու (1402 թ. Ավետարան, ՄՄ 5562) Տիրամոր պատկերով Ավետման տեսարանները, որտեղ Մարիամը գորգի կամ կարպետի վրա բազմած՝ իլիկով թել է մանում (Korkhmazian et al 1984, pl. 51; Հակոբյան 1982, տախ. I, նկ. 25, նկ. 39, նկ. 36) (նկ. 6բ): Նման պատկերներն արտահայտում են հայոց ավանդույթի մեջ ամրագրված այն հնագույն պատկերացումը, որտեղ իլիկով թել մանելը և գործելը համեմատելի են արարման գործընթացի հետ: Այդ տեսարաններում արտացոլված է նաև վանեցի-վասպուրականցիների գլխավոր զբաղմունքներից մանածագործությունը: Ուշագրավ է նաև, որ Վասպուրականի ձեռագրերի շատ մանրանկարներում տեսարանների խորքը գեղարվեստական լուծումներով գորգ է հիշեցնում: Գորգանման գործվածքները վասպուրականցիների կենցաղում այնպիսի ներգրավվածություն ունեին, որ շրջակա տարածությունը անկարող էին պատկերացնել առանց այդ գործվածքների: Գորգը հայոց, և մասնավորապես Վասպուրականի, կենցաղում սովորական երևույթ էր: Այդ պատճառով էլ գորգը մանրանկարներում հատուկ կամ կանխամտածված չէր պատկերվում: Նկարիչները տեսարաններում առկա ուղղահայաց և հորիզոնական տարածությունները կազմակերպում էին իրենց իրականությանը համապատասխան (կախում էին պատից, դրանով ուղղահայաց հարթություններ ստեղծում կամ փռում հորիզոնական դիրքով): Այսպիսով՝ այդ մանրանկարների շնորհիվ կարող ենք պատկերացում կազմել 13-րդ դարից մինչև 17-րդ դարը Վասպուրականի պատկերազարդ գորգերի և կտորների մասին:

Հավելենք, որ վասպուրականցիներն իրենց նշանակալի ներդրումն ունեցան նաև Խորհրդային Հայաստանի գորգագործության և մանածագործության զարգացման մեջ: Այսպես, 1928–1961 թթ. գորգագործական արտելների և ֆաբրիկաների կարևորագույն ֆինանսա-հաշվապահական և հաշվառման ոլորտի ղեկավարներից էր Վանում ծնված Ահարոն Մալխասյանը (1890–1978 թթ.)[6]: Իսկ նոր գործ-

[6] Տեղեկությունները վերցրել ենք Ահարոն Մալխասյանի անձնական արխիվից, որը մեզ սիրով տրամադրել է նրա թոռնուհին՝ Քնքուշ Մալխասյանը:

վածքների՝ գոբելենների կամ պաստառագորգերի արտադրության սկիզբը Հայաստանում կապվում է ծագումով Վասպուրականի Արճեշ քաղաքից ՀՀ վաստակավոր նկարիչ Կարապետ Եղիազարյանի (1932–2006 թթ.) անվան հետ: Կարապետ Եղիազարյանը հայկական գորգարվեստի մեծ գիտակներից էր, որը 1960–1970-ական թթ. Երևանում հիմնադրեց գոբելենագործության ազգային դպրոցը: Շուրջ քսան տարի Կ. Եղիազարյանը ղեկավարել է «Նկարիչների միության» դեկորատիվ-կիրառական արվեստի մասնաճյուղը: Վարպետի դուստրը՝ արվեստագետ Անուշ Եղիազարյանը[7] գրում է. «Եղիազարյանի առաջին փորձերն ընթանում են ավանդական գորգերը որոշ չափով մոդիֆիկացնելու հունով» (Եղիազարյան 2010, 9) (նկ. 7): Մեծ վարպետը սերունդներին ժառանգել է ոչ միայն իր ստեղծագործությունները, այլև իր ստեղծած գոբելենագործության ազգային դպրոցը:

Աղբյուրագիտական տեղեկություններ Վան-Վասպուրականի գորգերի մասին

Վանում (Վասպուրականում) գորգագործության զարգացման վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել տարբեր ժամանակաշրջանների գրավոր աղբյուրներում: Այսպես, Վանի թագավորությունում գործվածքների մասին հնագույն վկայություններից է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի Ք.ա. 714 թ. սեպագիր արձանագրությունը: Արձանագրության մեջ խոսվում է ասորեստանցիների կողմից Վանի թագավորության (Ուրարտու) Մուսասիրի տաճարի կողոպուտի մասին: Մեծ թվով առարկաների հետ մեկտեղ թալանի ավար են դարձել տաճարում գտնվող թանկարժեք կտորներն ու գործվածքները (Пиотровский 1962, 36): Հետագայում՝ 17-րդ դ. պատմիչ Առաքել Դավրիժեցին (1590-ական – 1670 թթ.) գրում է օսմանցիների կողմից հայկական մեկ այլ տաճարի՝ Վանի նահանգի Վարագա վանքի կողոպուտի մասին: Կողոպտված գանձերի մեջ եկեղեցական թանկարժեք առարկաների՝ սկիհների, խաչերի, մասնապահարանի (որի մեջ պահվում էր Ավագ Սուրբ Նշանը), ոսկետուփի, արծաթապատ ավետարանների, քշոցների, բուրվառների, կանթեղների հետ միասին գտնվում էին բարձրարժեք գործվածքներ: Դրանք են «թանկագին կտորից մեծագին շուրջառներ, վարագույրներ, բեմի ծածկոցներ», գրում է պատմիչը (Դավրիժեցի 1988, 391–392): Թվարկած առարկաների մեջ, անկասկած, եղել են նաև գորգեր, քանի որ գորգը եկեղեցու ներսույթի գլխավոր տարրերից էր, ինչպես նաև կրոնա-ծիսական կարևոր առարկաներից մեկը: Այդ մասին Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է, որ մինչև 20-րդ դ. սկիզբը Հայոց եկեղեցին ներսից ամբողջովին զարդարված էր գորգերով: Հավատացյալ-

[7] Անուշ Եղիազարյան – ծնվ. 1965 թվականին Երևանում, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի դասախոս: Կարապետ Եղիազարյանի աշակերտներից մեկն է և կրտսեր դուստրը: 2009 թվականին Անուշ Եղիազարյանը, համախմբելով մասնագետներին, մանկավարժական համալսարանում կազմակերպում է Կիրառական-դեկորատիվ արվեստի ամբիոնը, որն էլ ղեկավարում է մինչև 2018 թվականը: Ամբիոնում դասավանդվում էին գոբելենագործություն, գորգագործություն, կտորի գեղարվեստական ձևավորում, խեցեգործություն, մետաղամշակություն և ոսկերչություն, փայտափորագրություն, հագուստի մոդելավորում և այլն:

ները և ցածր դասի հոգևորականները պատարագի ժամանակ աղոթում էին գորգերի և հատուկ բարձերի վրա ծնկի եկած (Օրմանեան 1993, 194): Առաքել Դավրիժեցին էլ հայտնում է, որ գորգը փիլոնի և գավազանի հետ միասին վարդապետական իշխանության նշաններից է (Դավրիժեցի 1988, 232): Պատմիչը նաև ուշագրավ տեղեկություններ է հայտնում Վան քաղաքի մասին, որտեղ հատկապես, կարևորում է հայ վաճառականների ազգանվեր գործունեությունը՝ ուղղված ազգային ինքնության և մշակութային արժեքների պահպանությանը (Դավրիժեցի 1988, 191, 332, 399):

Անդրադառնալով 9–13-րդ դարերի արաբ պատմագիրների ու աշխարհագիրների գրավոր աղբյուրներին, ասենք, որ արաբական խալիֆայությունում քարավաններով Արևելքից մինչև Իսպանիա տեղափոխվում էին բազմաթիվ ապրանքներ, այդ թվում Հայաստանում պատրաստված թանկարժեք գորգեր ու կտորներ: Մեծածավալ ապրանքաշրջանառությունը խթանում էր արհեստների և արտադրության զարգացումը (առաջին հերթին գորգերի և կտորների արտադրությունը), արհեստակցական միությունների՝ համքարությունների առաջացմանը: Այս առումով Հայաստանի վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պարունակում ալ-Իստահրիի, Իբն Հաուքալի, աս-Սաալիբիի, Մասուդիի, ալ-Մուքթադիրի, Յաղուբիի և ուրիշների աշխատությունները: Տվյալ հեղինակները բարձր են գնահատում հայկական գորգերը և նշում են հայկական արտադրանքի բարձր որակը: Մատենագիր աս-Սաալիբին նշում է, որ հայկական բուրդը առաջինն էր համարվում եգիպտական բրդից հետո (Мец 1973, 369): Հեղինակները նշում են, որ հայկական գորգերի գեղեցկությունը պայմանավորված էր նրանց կարմիր գույնով, որն էլ, ըստ ալ-Մասուդիի, կանանց, երեխաների և ուրախության գույնն էր: Կարմիր գույնը, նշում է ալ-Մասուդին, ամենից լավն է աչքի համար, քանի, որ կարմիր գույնից ընդարձակվում է աչքի բիբը (Мец 1973, 369): Դեռևս 5-րդ դարում հայ պատմիչ Ղազար Փարպեցին նշում է, որ կարմիրը, հիմնականում, ստացվում էր այն որդերից, որոնք Արարատյան դաշտի եղեգների արմատներից էին սնվում: Պատմիչի խոսքով, դրանք օգտակար են՝ շահ և շքեղություն են պարգևում (Պարպեցի 1907, 21): Հայաստանից արտահանվող որդան կարմիրի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում 9–11-րդ դարերի արաբ, պարսիկ պատմիչներն ու աշխարհագիրները՝ Իբն ալ-Ֆակիհը, ալ-Իսթահրին, Իբն Հաուկալը, Շամս ալ-Մուկադդասին և այլք (Տեր-Ղևոնդյան 2005, 502, 574, 630, 656): Բյուզանդիայում որդան կարմիրը անվանում էին «հայկական պուրպուր» (Առաքելյան 1958, 284): Վենետիկցի ճանապարհորդ-վաճառական Մարկո Պոլոն (13–14-րդ դդ.) նույնպես խոսում է հայկական գորգերի մասին և նշում, որ հայերը գործում են աշխարհի ամենագեղեցիկ և նուրբ գորգերը, կարմիր և այլ գույներով ներկված կտորները (Марко Поло 1955, 56): Հայկական գորգերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հաղորդում Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտեցին (897–929 թթ.): Նա գրում է, որ Երազգավորսում գտնվող Սմբատ Բագրատունուն հարուստ նվերներ են ուղարկում, որոնցում «…երևելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրությամբ որդանց…» (Դրասխանակերտեցի 1912, 198): Հայտնի չէ Սմբատ Բագրատունուն նվեր ուղարկված գորգերի ծագման վայրը: Հայտնի է, որ

այդ գորգերը նրան ուղարկել էր Վասպուրականի թագավոր Գագիկ 1-ին Արծրունու դրացին և մտերիմը՝ արաբ կառավարիչ Յուսուֆը (որին էլ իր հերթին թանկարժեք նվերներ էին մատուցում հայերը) և այդ գորգերը, ինչպես նշվում է, ներկված էին որդան կարմիրով: Չի բացառվում, որ դրանք պատրաստվել են Վասպուրականում: Նույնիսկ 1885 թ. Կոստանդնուպոլսում հրատարակվող «Մասիս» ամսագրում նշվում է, որ «տիրող գույնը Վասպուրականում կարմիրն է» (Քիւրտեան 1947, 131): Ազգագրագետ Երվանդ Լալայանը, խոսելով Վասպուրականի տնայնագործության մասին, գրում է, որ մինչև 1913 թվականը Վասպուրականում բրդյա մանած թելի փաթույթները ներկում էին որդան կարմիրով: Դրանք եռացնում էին 10–12 ժամ, ամեն փաթույթի համար օգտագործելով 20 գրամ որդան կարմիր և 40 գրամ գինու մրուր (Լալայեան 1914, 195):

13-րդ դարի արաբ աշխարհագիր Յակուտ ալ-Համավին (1178–1229 թթ.) Հայաստանի երկու մեծ քաղաքների՝ Վանի և Կարինի մասին խոսելուց հետո, մեջբերում է 9-րդ դարի ճանապարհորդ Աբու Ամնիի հետևյալ վկայությունը. «Վանի մեջ մեծ գորգեր էին գործվում...» (Թեմուրճյան 1955, 32): Իսկ 982 թ. պարսիկ անանուն աշխարհագիրը վկայում է, որ Բերկրի, Արճեշ, Խլաթ, Նախիջևան քաղաքներում (հիշատակում է նաև Խոյը և Բիթլիսը (Բաղեշը)) կան բարգավաճ, բազմամարդ, փոքր ոստաններ, որոնք ունեն հարստություն և վաճառականներ: Այդ ոստաններում արտադրվում էին մեծ քանակությամբ զիյլու-գորգեր (զիյլու-հա-էյի գալի): Նույն հեղինակը նշում է, որ այդտեղ գործում էին նաև աղոթագորգեր (Քիւրտեան 1947, 63):

Բանասեր, աղբյուրագետ Լևոն Խաչիկյանը, ուսումնասիրելով 12–15-րդ դարերի ձեռագիր սկզբնաղբյուրներում Հայաստանի քաղաքների ներքին կյանքի մասին տարբեր վկայություններ, նշում է, որ այդ ժամանակաշրջանում արդեն եղել են արհեստավորաց միություններ: Ստեղծվում են առևտրական ու արհեստավորական «եղբայրություններ», որոնք միավորում են նույն զբաղմունքի կամ նույն սոցիալ-տնտեսական գոյավիճակի մարդկանց՝ կարևոր դեր խաղալով երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում (Խաչիկյան 1951, 73): Հայտնի է, որ Երզնկայի 12–15-րդ դարերի մանածագործները, ոսկերիչները, շինարարները կազմակերպված էին և «եղբայրություններ» էին ստեղծել: Լևոն Խաչիկյանը գրում է, որ Վասպուրականի քաղաքներից մեկը նույնպես ունեցել է նման կազմակերպություն (Խաչիկյան 1951, 73): Ուշագրավ է 1462 թվականին Կտուց անապատում ընդօրինակված Հայսմավուրքի գրիչ Խաչատուրի հիշատակությունն այն մասին, որ ձեռագիրը ստացողի մեծ պապը «ախի (եղբայր) Կարապետն» է: Արհեստավորաց վարպետների՝ ախիների մասին 1332 թվականին գրում է նաև արաբ ճանապարհորդ Իբն-Բատուտան (Խաչիկյան 1951, 77):

Ինչպես նշեցինք, առևտրական հարաբերությունների ընդլայնումը էական դեր էր խաղում արհեստների զարգացման համար: Միջնադարում միջազգային առևտրի մեջ կարևոր նշանակություն ունեին Հայաստանի հարավային առևտրական ուղիները, որոնք գտնվում էին Արծրունիների թագավորության և մահմեդական էմիրայությունների սահմաններում: Առավել կարևոր կետերից էին Վանը, Ոստանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Արզնը, Մեյաֆար-

քինը և Համիդը (Տիգրանակերտը) (Манандян 1954, 219): Արաբ մատենագիրների հաղորդմամբ Հարավային ուղիներից մեկը՝ Արդեբիլից դեպի Համիդ (Տիգրանակերտ) անցնում էր Ուրմիա լճի շուրջ գտնվող Դավրեժ, ինչպես նաև Սալմաստ-Խոյ քաղաքներով և շարունակվում էր Բերկրի-Արճեշ-Խլաթ-Բաղեշ քաղաքների ուղղությամբ (Манандян 1954, 235–236): Այդ ճանապարհներով էլ բազմաթիվ այլ արժեքավոր բրդյա և մետաքսյա կտորների, մորթիների, ծածկոցների, որդան կարմիրի, հագուստի և այլնի հետ տանում էին նաև գորգեր, որոնք ստեղծվում էին այդ ուղիների վրա գտնվող կենտրոններում: Մեծ քաղաքները, ըստ Հակոբ Մանանդյանի, որտեղ ձևավորվել էր արհեստավորաց դասը, բաղկացած էին երեք հատվածներից՝ միջնաբերդից, քաղաքային և առևտրա-արդյունաբերական մասերից, որտեղ էլ գտնվում էին արհեստավորների թաղամասերը (Манандян 1954, 220–221): Այսպես, օրինակ՝ 13-րդ դարի արձանագրությունների մեջ հիշատակվում են Անի քաղաքի արհեստավորների թաղամասերը, որոնցից մեկը Կատտնոցը գորգագործների և թաղիքագործների փողոցն էր (Առաքելյան 1976, 565): Պետք է ենթադրել, որ գորգագործական արհեստանոցներով այդպիսի թաղամասեր կային նաև Վասպուրականի քաղաքներում: Վանում մանածագործական արհեստանոցների մասին տեղեկություններ է հաղորդում 17-րդ դարի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրություն» աշխատության մեջ: Նա նշում է, որ Վանի քարայրներում կան մանածագործական արհեստանոցներ, որտեղ վարպետները ճախարակներով մանում են մետաքսյա, բամբակյա, բրդյա թելեր: Իսկ վանեցիների հագուստի մասին Չելեբին գրում է, որ այն պատրաստված էր գույնզգույն բրդյա կտորներից (Չելեբի 1967, 233, 243):

Հատկապես կարևորում ենք 17-րդ դարի այն վավերագրերը, որտեղ ներկայացված են «Հայ առևտրական ընկերության» ակտիվ գործունեության մասին տեղեկությունները: «Հայ առևտրական ընկերության» և Մոսկովյան կառավարության միջև 1667 թվականին կնքված պայմանագրի համաձայն Իրանի մետաքսի համաշխարհային առևտրի գլխավոր ուղին դեպի Եվրոպա պետք է անցներ Ռուսաստանով: Մեզ հասած արխիվային վավերագրերում և վաճառականների հաշվեմատյաններում բազմիցս հիշատակվում են բրդյա և մետաքսյա գորգերի, ծածկոցների, բրդից, մետաքսից, բամբակից պատրաստված կտորների, հագուստների առևտրի մասին տեղեկությունները: Հայտկապես կարևոր են հայ գորգագործ և մանածագործ վարպետների արտասահման մեկնելու մասին տվյալները (Армяно-русские отношения 1953, 25, 66–69, 99–103; Շահվելու որդի 1994, 34, 37–38):

Ամփոփելով, նշենք, որ Վան-Վասպուրականի գորգարվեստի հնագույն ակունքների մասին է վկայում հայտնի բանագետ Արամ Ղանալանյանի 1930-ական թվականներին գրի առած գորգագործի երգը՝ «Փալաս, ջեջիմ/ Քիլիմ, գնբա./ Խինեմ, կնրծեմ, / Ձըվալ, աբա./ Տարտուկ թալեմ՝/ Ասպ առնի թել./ Քարգութ զարկեմ,/ Դըմփըլ, դըմըփըլ:/ Դըփփը, դըփփը/ Դըփփը դըփփըլ./ Տառ նա, նա նայ/ Նա նայ, նա նայ,/ Տիր նա, նա, նայ,/ Նինի, նինի./ Ասպ ը սանդըռ՝/ Յելնի իչնի, / Դոր վոր իչնի,/ Թել ի մեչն ի…» թ. ձ-իր ժ. (Վան.) (Ղանալանյան 1937, 223–224): Երգվում է գորգ, կարպետ, ջեջիմ գործելու մասին: Երգի առանձին վանկերը ընդ-

միջվում են կրկնվող աշխատանքային գործընթացի ժամանակ ձայնային ռիթմիկ հնչյուններով: Իսկ երգի ակունքները գալիս են արխաիկ ժամանակներում երգվող էպիկական սյուժեներից:

Եզրակացություն

Հայաստանի պատմության թանգարանի գորգերի հավաքածուում առանձին խումբ են կազմում Վասպուրականի 17-րդ դ. գորգերը (ՀՊԹ № 9282, ՀՊԹ № 8968, ՀՊԹ № 10101-2): Գորգագործությունը Վասպուրականում ավանդական արհեստներից էր, ծագել էր դեռևս հնագույն շրջանում, սերտորեն կապված էր տեղական տնտեսության կանոնակարգված և համակարգված զարգացման հետ: Խավով, հանգույցներով գործված գորգերը հայտնի են եղել Վանի թագավորությունում: Վասպուրականի գորգերը բազմիցս հիշատակվում են 9–13-րդ դդ. հայ և օտար գրավոր աղբյուրներում: Վասպուրականի գործվածքների մասին հիշատակումներ կան նաև 17–20-րդ դդ. սկզբի պատմագիրների թողած տեղեկություններում, արխիվային փաստաթղթերում, ամսագրերում, թերթերում:

Վասպուրականի գորգերն իրենց գեղարվեստա-պատկերային հատուկ կառուցվածքով՝ իրենց գեղարվեստական ձևավորմամբ՝ հորինվածքով, զարդապատկերով, բազմերանգ և հյութեղ գույներով համեմատելի են Վասպուրականի 13–17-րդ դդ. մանրանկարներին: Մյուս կողմից էլ Վասպուրականի գորգերի գեղարվեստական տարրերը մշտապես հանդիպում են Վասպուրականի 17-րդ դ.-ից – 20-րդ դ. սկզբի կիրառական արվեստի նմուշների՝ ասեղնագործված ծածկոցների, սրբիչների, դաջազարդ կտորների, հագուստի համալիրի մաս կազմող տարրերի, ոսկուց և արծաթից պատրաստված զարդերի վրա: Դրանք բնութագրվում են միևնույն գեղարվեստական ձևերով, գույներով և բովանդակությամբ:

Իսկ Վասպուրականի, Արցախի և Սյունիքի 17-րդ դարի գորգերի միջև եղած նմանություններն ու ընդհանրություններն ունեն հետևյալ բացատրությունը. Վասպուրական նահանգը հարավ-արևելյան կողմից սահմանակից էր Արցախին և Սյունիքին և սերտ կապեր ուներ գորգագործությամբ հայտնի այս շրջանների հետ: Հայտնի է, որ 17-րդ դարում, թե՛ Արցախը, թե՛ Սյունիքը, ինչպես նաև Վասպուրականի հարավ-արևելյան հատվածը 1639 թվականից, գտնվում էին Իրանի տիրապետության տակ: Ստեղծված իրավիճակով էին բացատրվում նշված շրջանների միջև դարերով ձևավորված սերտ կապերը: Ակնհայտորեն տեսանելի է Արցախի, Սյունիքի, Վասպուրականի 17–18-րդ դդ. սկզբի գորգերի նմանությունը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան

ՀՍՍՌ ԳԱ – Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիա

ՀՍՍՀ ԳԱ – Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գիտությունների Ակադեմիա

ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն

Арм. ССР – Армянская Социалистическая Республика

АН СССР – Академия наук Союза Советских Социалистических Республик

НАН РА – Национальная Академия Наук Республики Армения

HMA – History Museum of Armenia

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՇՈՒՂԱԹՈՅԵԱՆ 2019 – Աշուղաթոյեան Ն., *Փրկեալ ձեռագործք հայոց*, Երևան, «Ժողովրդական արուեստի հանգոյց» կրթամշակութային հիմնադրամ, 2019:

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1958 – Առաքելյան Բ., *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958:

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1976 – Առաքելյան Բ., Քաղաքների նոր վերելքը XII–XIII դարում. արհեստավորական եղբայրությունները (համքարությունները), *Հայ ժողովրդի պատմություն*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, հ. III, 562–570:

ԳՐԵԿՅԱՆ 2008 – Գրեկյան Ե., Կինն Ուրարտուում. Ուրարտուի թագուհիները, *Շնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն*, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008:

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԹԱԹԻԿՅԱՆ 2012 – Գրիգորյան Ա., Թաթիկյան Վ., *Հայկական գորգարվեստ XVII–XX դդ.*, Երևան, «Պրինտ» հրատարակչատուն, 2012:

ԴԱՎԹՅԱՆ 1981 – Դավթյան Ս., *Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981:

ԴԱՎՐԻԺԵՑԻ 1988 – Առաքել Դավրիժեցի, *Պատմություն*, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1988:

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԵՑԻ 1912 – Յովհաննու կաթ. Դրասխանակերտեցւոյ, *Պատմութիւն Հայոց*, Դրուագ Ա, Թիֆլիս, Էլեկտրատպարան Օր. Ն. Աղանեանցի, 1912:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ 2010 – Եղիազարյան Ա., *Կարապետ Եղիազարյան. գոբելեն, գեղանկար, խճանկար*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2010:

ԹԱԹԻԿՅԱՆ 2004 – Թաթիկյան Վ., *Արցախի տոհմագորգերը*, Երևան, «Լուսաբաց» հրատարակչություն, 2004:

ԹԵՄՈՒՐՃՅԱՆ 1955 – Թեմուրճյան Վ., *Գորգագործությունը Հայաստանում*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, 1955:

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 2021 – Իսրայելյան Ա., *Հայուհիների զարդերը XVIII–XX դդ.*, Երևան, Հայաստանի պատմության թանգարանի հրատարակչություն, 2021:

ԼԱԼԱՅԵԱՆ 1914 – Լալայեան Ե., *Տնայնագործութիւնը Վասպուրականում, Շատախի շալագործութիւնը*, Թիֆլիս, Էլեքտրաշարժ տպարան «Էսպերանտո», 1914:

ԽԱՉԻԿՅԱՆ 1951 – Խաչիկյան Լ., 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը», *Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1951, № 12, 73–84:

ՀԱԿՈԲՅԱՆ 1982 – Հակոբյան Հ., *Վասպուրականի մանրանկարչությունը*, Գիրք Բ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1986 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1991 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1998 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1998:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1965 – Հարությունյան Ս., *Հայ ժողովրդական հանելուկներ*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1965:

ՀՄԱՅԱԿՅԱՆ 1990 – Համայակյան Ս., *Վանի թագավորության պետական կրոնը*, Երևան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1990:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 1937 – Ղանալանյան Ա., *Հայ շինականի աշխատանքային յերգեր*, Յերևան, Պետական հրատարակչություն, 1937:

ՇԱՀՎԵԼՈՒ ՈՐԴԻ 1994 – *Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը*, աշխ. Շ. Խաչիկյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1994:

ՉԵԼԵԲԻ 1967 – Էվլիյա Չելեբի, Ուղեգրություն, *Թուրքական աղբյուրներ, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, 4, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967:

ՊԱՏՐԻԿ 1967 – Պատրիկ Ա., *Հայկական կտարազ*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967:

ՊԱՐՊԵՑԻ 1907 – Ղազարայ Պարպեցւոյ, *Պատմութիւն Հայոց, Դրուագ Ա*, Թիֆլիս, Ելեկտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանի, 1907:

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ 1931 – Սամուելյան Խ., *Հին Հայաստանի կուլտուրան, Ա հատոր*, Յերեվան, Պետական հրատարակչություն, 1931:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ 1978 – Գարեգին եպս. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, *Երկեր*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, h. I:

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ 2005 – Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ Թ–Ժ, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005:

ՔԻՒՐՏԵԱՆ 1794 – Քիւրտեան Յ., *Գորգը հայոց մօտ*, Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարեան տպարան, 1947:

ՔՅՈՒՐՔՉՅԱՆ 2016 – Քյուրքչյան Ա., *Հայկական դրոշմազարդ կտավ*, Երևան, «Նուշիկյան Պրինտ» տպագրատուն, 2016:

ՕՐՄԱՆԵԱՆ 1993 – Մաղաքիա արք. Օրմանեան, *Հայոց եկեղեցին*, Երևան, ՀՀ կառավարության «Պարբերական» հրատարակչության տպարան, 1993:

АРМЯНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ 1953 – *Армяно-русские отношения в XVII в.* (сборник документов), под ред. В. Парсамяна, Ереван, издательство АН Арм. ССР, 1953.

АРУТЮНЯН 1964 – Арутюнян Н., *Земледелие и скотоводство Урарту*, Ереван, издательство Института археологии и этнографии АН Арм. ССР, 1964.

АРУТЮНЯН 2001 – Арутюнян Н., *Корпус урартских клинообразных надписей*, Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2001.

БАРКОВА 2012 – Баркова Л., *Красота, сотканная из тайн*, Санкт-Петербург, издательство Государственного Эрмитажа, 2012.

ВЕРХОВСКАЯ 1955 – Верховская А., Текстильные изделия из раскопок Кармир – Блура, *Кармир – Блур, III*, Ереван, издательство АН Арм. ССР, 1955, 67–71.

ИСАЕВ 1932 – Исаев М., *Ковровое производство Закавказья*, Тифлис, издание Научно-исследовательского Института кавказоведения Академии Наук СССР, 1932.

МАНАНДЯН 1954 – Манандян Я., *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен*, Ереван, издательство Ереванского университета, 1954.

МАРКО ПОЛО 1955 – Марко Поло, *Книга*, пер. старофранцузского И. Минаева, Москва, Государственное издательство Географической литературы, 1955.

МАРТИРОСЯН 1998 – Мартиросян А., *На великом шёлковом пути*, Ереван, издательство Института истории НАН РА, 1998.

МЕЦ 1973 – Мец А., *Мусульманский Ренессанс*, изд. 2-е, Москва, издательство «Наука», 1973.

ПИОТРОВСКИЙ 1950 – Пиотровский Б., Ассирийские и египетские предметы, *Кармир-Блур*, *I*, Ереван, издательство АН Арм. ССР, 1950.

ПИОТРОВСКИЙ 1952 – Пиотровский Б., Кладовая № 25, *Кармир-Блур*, *II*, Ереван, издательство АН Арм. ССР, 1952.

ПИОТРОВСКИЙ 1955 – Пиотровский Б., Урартские печати, *Кармир-Блур*, *III*, Ереван, издательство АН Арм. ССР, 1955.

ПИОТРОВСКИЙ 1962 – Пиотровский Б., *Искусство Урарту*, Москва, издательство Государственного Эрмитажа, 1962.

ПИОТРОВСКИЙ 1970 – Пиотровский Б., *Кармир-Блур*, Ленинград, издательство «Аврора», 1970.

AVANESYAN 2023 – Avanesyan L., *The Etimology and Semantics of Ornaments in Armenian Carpets*, Yerevan, HMA pub., 2023.

GANTZHORN 1998 – Gantzhorn V., *Orientalische Teppiche*, Köln, «Benedikt Taschen» Verlag, 1998

KORKHMAZIAN ET AL 1984 – Korkhmazian E., Drampian I., Hakobian Gr., *Armenian Miniatures of the 13th and 14th centuries*, Leningrad, «Aurora» art publishers, 1984.

OHANDJANIAN, AWANESSIAN 2007 – Ohandjanian A., Awanessian L., *Felszeichnungen in Armenien*, Wien, Printed in Armenia: Tigran Metz Gmbh, 2007.

TRIMBACHER 1988 – Trimbacher P., *An Apdated History of Ancient Rugs*, Plankenstein, Kunst-und Kulturveranstaltungen Plankenstein, 1988.

Lilia Avanesyan

Ph.D.

History Museum of Armenia

lilia.a65@mail.ru

17TH CENTURY VASPURAKAN CARPETS FROM THE COLLECTION OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

Keywords: carpet, composition, ornament, fabrics, production, workshop, Armenian cochineal

The 17th century carpets from the Armenian province of Vaspurakan have a special place in the History Museum of Armenia: the "Artsiv" ("Eagle") type carpet (HMA №8968), the medallion carpet with stylized scorpions (HMA № 10101-2), and the medallion carpet with crosses and a stylized tree in the center of the medallions (HMA № 9282).

Carpets of the 17th century (HMA № 8968 and HMA №10101-2) with solar and tree symbols, as well as stylized eagles, palmettes, scorpions, dragons, and snakes were made in special weaving workshops in carpet-making centers in the province of Vaspurakan. The artistic design of these carpets is very similar to the artistic design of the Syunik-Artsakh group of carpets from the 17th to the early 20th century. This is explained by the fact that the province of Vaspurakan in the east was adjacent to the provinces of Syunik and Artsakh, which were also famous carpet production centers. The handicraft carpet from Maku (HMA № 9282) was woven for Sahak in 1689. This is evidenced by the Persian inscription with distorted signs. There is a date of production on the carpet: "1689," which is woven in Arabic characters, but according to the Christian calendar, i.e., 1689 AD. The carpet's inscription was read by the researchers of the "Matenadaran" Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts A. Avetisyan, K. Kostikyan, M. Khecho, and the researcher of the History Museum of Armenia A. Zohrabyan. In the center of the composition there are small medallions with ornaments symbolizing the sun, the world tree, etc. Around the central composition there is a wide ornamental belt with symbols of

heavenly waters, earth, fire, and fertility. The carpet takes on special significance with its bright, harmoniously combined contrasting colours — red, yellow, blue. This specimen has no analogues among the carpets known to us. The composition and ornaments of this carpet can be compared with the compositions and ornaments of fabrics, as well as the embroideries of headwear and blankets of the 17th–18th centuries of Van-Vaspurakan. They are also found on gold and silver items from Van-Vaspurakan from the 17th to the early 20th century.

A fundamental study of the 17th century Vaspurakan carpets provides essential and important information about the material and spiritual culture of the Armenians of the province of Vaspurakan. Important additions to the topic are numerous artifacts from the era of the Kingdom of Van (Urartu), information from written sources of the 9th–17th centuries, medieval miniatures of the Vaspurakan school, colorful fabrics, and artistic embroideries that were made for centuries by Armenians from various cities and villages of the province of Vaspurakan.

Лилия Аванесян

к.и.н

Музей истории Армении

lilia.a65@mail.ru

КОВРЫ ВАСПУРАКАНА 17-ОГО ВЕКА ИЗ КОЛЛЕКЦИИ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

Ключевые слова: ковёр, композиция, орнамент, ткани, армянская кошениль, производство, мастерская

В коллекции Музея истории Армении особое место занимают ковры 17-ого века из армянской провинции Васпуракан: ковёр типа «Арциv» («Орел») (МИА №8968), медальонный ковёр со стилизованными скорпионами (МИА №10101-2) и медальонный ковёр с крестами и стилизованным древом в центре медальонов (МИА № 9282).

Ковры 17-ого века (МИА № 8968 и МИА №10101-2) с солярными символами и символами древа, а также со стилизованными орлами, пальметами, скорпионами, драконами и змеями изготавливались в специальных ткацких мастерских в центрах ковроделия в провинции Васпуракан. Художественное оформление этих ковров очень похоже на художественное оформление ковров 17-нач. 20 века сюник-арцахской группы. Это обьясняется тем, что провинция Васпуракан на востоке была сопредельна с провинциями Сюник и Арцах, которые также были знаменитыми центрами производства ковров. Ковёр из Маку (МИА № 9282) кустарного производства был выткан для Саака в 1689 году. Об этом свидетельствует персидская надпись с искажёнными знаками письма. На ковре имеется дата изготовления: «1689» год, которая выткана арабскими знаками, но по христианскому летоисчислению, т. е. 1689 год от Рождества Христова. Надпись ковра была прочитана научными сотрудниками хранилища древних рукописей им. Месропа Маштоца «Матенадаран» А. Аветисяном, К. Костикяном, М. Хечо и научным сотрудником Музея истории Армении А. Зограбяном. По центру композиции расположены небольшие медальоны с орнаментами, символизирующими солнце, мировое древо и пр. Вокруг центральной композиции – широкий орнаментальный пояс с символами небесных вод, земли, огня, плодородия. Ковёр принимает особую значимость своими яркими, гармонично сочетающимися контрастными цветами – красным, желтым, синим. Этот экземпляр не имеет аналогов среди известных нам ковров. Композицию и орнаменты данного ковра можно сравнить с композициями и орнаментами тканей, а также вышивками головных уборов и покрывал 17–18 веков мастеров Вана и Васпуракана. Они также встречаются на золотых и серебрянных изделиях из Вана-Васпуракана 17 – нач. 20века.

Фундаментальное исследование ковров Васпуракана 17-ого века дает необходимые и важные сведения о материальной и духовной культуре армян провинции Васпуракан. Важным дополнением к теме являются многочисленные артефакты из раскопок эпохи Ванского царства (Урарту), сведения письменных источников 9–17 веков, средневековая миниатюра васпураканской школы, красочные ткани, художественные вышивки, которые изготовлялись веками армянами различных городов и сел провинции Васпуракан.